



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Ս. ՆԱՅԱՆՎԵՐՈՒ ԱՐԵՄՍԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԱՆԹԻԼԻԱՍ ՄԵԿՆԵՑԱԲ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Կիրակի, 30 Մայիսին մեկնեցաւ Անթիլիաս, Լիբանան, ընդառաջելով Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հրաւերին:

Յառաջիկայ շաբաթավերջին, 5 եւ 6 Յունիսին, Առաջնորդ Սրբազանը քահանայական կոչում եւ արեղայական ձեռնադրութիւն պիտի կատարէ Կաթողիկոսութեան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ: Ձեռնադրութեան պիտի արժանանան Մայրավանքի երեք սաներ:

Առաջնորդ Սրբազանը Լոս Անճելըս պիտի վերադառնայ յաջորդ շաբաթավերջին:

PRELATE DEPARTS FOR LEBANON

By the invitation of H.H. Catholicos Aram I, on Sunday, May 30, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, departed for Lebanon, where on June 5th and 6th, he will conduct the ordination of three celibate priests at St. Gregory the Illuminator Mother Cathedral in Antelias.

The Prelate will return to Los Angeles the following weekend.

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՖՈՆՏԻ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Կազմակերպութեամբ Հայկական Միջազգային Բժշկական Ֆոնտին, Կիրակի 6 Յունիսին երեկոյեան, ժամը 5:30-ին, ճաշկերոյթ մը տեղի պիտի ունենայ Պըրպէնքի Castaway ճաշարանին մէջ, ի նպաստ Հայաստանի անկար մանուկներուն:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն, Արժ. Տ. Վազգէն Քհնյ. Աթմաճեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին, պիտի կատարէ բացման աղօթքը եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան Հօր օրհնութեան ու գնահատանքի խօսքը:

ARMENIAN INTERNATIONAL MEDICAL FUND GALA

On Sunday, June 6th, 2010, the gala dinner of the Armenian International Medical Fund will take place at Castaway in Burbank. Proceeds from the event will be allocated to providing medical attention to hearing impaired children in Armenian.

Pastor of St. Mary's Church Rev. Fr. Vazken Atmajian will attend and convey the Prelate's blessings.

ԲԱՑՈՒՄ՝ ԱՐՇԻԼ ԿՈՐՔԻԻ ԳՈՐԾԵՐՈՒ ՑՈՒՑԱՅԱՆՂԵՍԻՆ

Լոս Անճելըսի Ժամանակակից Արուեստի Թանգարանը իր յարկին տակ կը հիւրընկալէ աշխարհահռչակ ու բազմատաղանդ հայազգի արուեստագետ Արշիլ Կորքիի գործերէն հաւաքածոյ մը:

Ցուցահանդէսին պաշտօնական բացումը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 4 Յունիսին ու պիտի տեւէ մինչեւ 20 Սեպտեմբեր: Ցուցադրութեան դրուած են Արշիլ Կորքիէն շուրջ 200 գործ:

Յանուն Առաջնորդ Սրբազան Զօր, Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Զոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան Ուրբաթ, 4 Յունիսի երեկոյեան, ներկայ պիտի ըլլայ ցուցահանդէսի պաշտօնական բացման արարողութեան եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան Զօր օրհնութեան խօսքը:

MUSEUM OF CONTEMPORARY ART PRESENTS ARSHILE GORKY: A RETROSPECTIVE

The Museum of Contemporary Art in Los Angeles is featuring an exhibition of the works of Arshile Gorky titled "Arshile Gorky: A Retrospective", which will run from June 6th to September 20th. Nearly 200 of the artist's works will be on display including paintings, sculptures, prints, and drawings.

The opening reception of the exhibit will take place on Friday, June 4th, 2010. Very Rev. Fr. Barthev Gulumian will attend on behalf of the Prelate.
